ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2024-2028 թթ.

ԵՐԵՎԱՆ 2024

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ռազմավարական ծրագիրն առաջիկա չորս տարիների գործունեության պլանավորման փաստաթուղթ է, որը նախանշում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հիմնարար ուղղությունները և հեռանկարը: Փաստաթղթում սահմանված են կենտրոնի առաջիկա գործունեությունը և հավակնությունները՝ հետազոտական, գիտական, կրթական, որակի ապահովման, միջազգային համագործակցության և սոցիալական պատասխանատվության ուղղություններով:
Ծրագրի իրագործման ընթացքն ուղեկցվելու է կենտոնի ձեռքբերումների ներքին և արտաքին միջավայի փուլային վերլուծություններով, գնահատմամբ և հաշվետվողականությամբ՝ հնարավորություն ընձեռելով դիմակայել նոր մարտահրավերներին, քայլել ժամանակին համընթաց ու դրսևորել նախաձեռնողականություն:

Կենտրոնի առաքելությունն է՝
Միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան գիտահենք կրթական ծրագրերի իրականացումը, գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ հետազոտող-մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը, կրթության միջազգայնացումն ու մրցունակության ապահովումը:

Կենտրոնի տեսլականն է՝
Դառնալ գիտական ստեղծարար միջավայր ապահովող և նորարություններով առաջնորդվող հետազոտական համալսարան, խթանելով հետազոտահեն կրթության, գիտության, արտադրության ներդաշնակ և արդյունավետ փոխգործակցությունը: Կենտրոնի գաղափարախոսության առանցքում լավագույն ավանդույթների պահպանմամբ, հավասար հնարավորությունների ստեղծմամբ և ակադեմիական ազատությունների ապահովմամբ համագործակցային միջավայրի ձևավորումն ու զարգացումն է:

Կենտրոնի հիմնարար արժեքներն են՝
Կրթության բարձր որակը, ակադեմիական ազնվությունն ու ազատությունը, համագործակցությունը, բարեվարքությունը, ստեղծարարությունը, հաշվետվողականությունը:

ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսանողներին տրամադրել գիտելիքա-հետազոտահեն կրթություն՝ ապահովելով մրցունակ գիտելիք, կարողություն ու փորձառություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Բարելավել կրթական ծրագրերի վերջնարդյունքները՝ զարգացնելով ուսանողների միջգիտակարգային գիտելիքները և կարողությունները:
- Վերանայել ուսանողների գնահատման կարգը՝ գնահատման արժանահավատության բարձրացման նպատակով:
- Բարելավել ուսումնական լսարանների և լաբորատոր ենթակառուցվածքների հագեցվածությունը:
- Դասախոսներին և ուսանողներին տրամադրել խմբային և անհատական խորհրդատվական ծառայություններ:
- Նոր մագիստրոսական կրթական ծրագրեր:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ապահովել կրթության հասանելիություն սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների համար:
- Առցանց դասընթացների առկայություն և հասանելիություն
- Ուսանողների գնահատման նորացված մեթոդաբանություն և գործող նոր կարգ:
- Խորհրդատվական գործող ծառայություններ:
- Նոր կրթական ծրագրերի թվաքանակի աճ:
- Կրթական ծրագրերի հեռավար իրականացման հնարավորություն նաև այլ ծրագրերի համար:
- Մոնիթորինգ և բենչմարքինգ՝ բաժնի լիազորությունների շրջանակներում:
- Տարեկան առնվազն մեկ նոր ՄԿԾ-ի առկայություն:

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Գործատուների և շրջանավարտների ներգրավմամբ կազմակերպված աշխատաժողովներ և քննարկումներ	ՄԿԾ-ների ինքնավերլուծություններ (պարբերաբար)	2024-2025թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
2.	Առաջավոր բուհերի	Լրամշակված	2024 -	ԳԿՄԿ բյուջե

	գնահատման համակարգի բենչմարքինգ	գնահատման բազմագործուն համակարգ	2025թթ	դրամաշնորհային միջոցներ
3.	Արտաքին շահակիցների ներգրավմամբ ՄԿԾ իրականացման մոնիթորինգ /տարեկան առնվազն 2 ՄԿԾ	Ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ մոնիթորինգի խմբերի զեկույցներ	2024-2028թթ	Տարեկան բյուջեից հատկացում՝ ըստ նախահաշվի
4.	Նոր գիտա-ուսումնական ենթակառուցվածքների ստեղծում	Ժամանակակից պահանջներին համապատասխան գիտա-ուսումնական ենթակառուցվածքներ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
5.	Ուսանողների գիտելիքների տսուգման և գնահատման կարգի վերանայում	Ուսանողների գնահատման նորացված կարգ	2024-2025թթ	ԳԿՄԿ բյուջե
6.	Խորհրդատվական ծառայություններ	Խորհրդատվություններ ստացած աշխատակիցներ և ուսանողներ	2025-2028թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
7.	Հետազոտական և վերլուծական կարողություններ զարգացնող կամընտրական կամ լրացական առանձին առարկաներով ՄԿԾ համալրում	Վերանայված ՄԿԾ-ներ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱՀԵՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Գիտության և կրթության շաղկապում, հետազոտահենք կրթության իրականացում, գիտական կադրերի պատրաստում:
- Նորարարական գիտահետազոտական աշխատանքների իրականացում՝ մասնագիտությունների լայն շրջանակով:
- Գիտահետազոտական նախագծերում պրոֆեսորադասախոսական համակազմի և ասպիրանտների և ուսանողների ներգրավվածության ապահովում:
- Գիտական բարձր վարկանիշ ունեցող շտեմարաններում տպագրության խթանում և հետազոտությունների հանրայնացում:
- Գիտահետազոտական գործունեության էթիկական նորմերի գործադրում և բաց գիտական միջավայրի ձևավորման քաղաքականություն:
- Օտար լեզուներով հրապարակումների աճ ապահովում (տեղական և միջազգային ամսագրերում) Web of Science և Elsevier's Scopus database-ի կողմից ինդեքսավորված ակադեմիական ամսագրերում հրապարակված հոդվածների թվի աճ:
- Ակադեմիական ազնվությունը երաշխավորող նոր մեխանիզմների ներդրում և կիրառում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հետազոտահեն կրթության կազմակերպման համար միջավայրի շարունակական արդիականացում և կատարելագործում:
- Աշխարհի առաջատար գիտակրթական կենտրոնների հետ գիտահետազոտական համագործակցային կապերի ընդլայնում, մագիստրանտների և ասպիրանտների ներգրավմամբ նոր նախագծերի իրականացում:
- Գիտահրատարակչական գործունեության իրականացում, ակադեմիական գիտական պարբերականի պորտալի կիրարկում:
- Գիտական ծրագրերում ուսանողների ու ասպիրանտների մասնակցության խթանում՝ խրախուսման արդիական գործիքակազմի կիրարկում :
- Մագիստրոսական ծրագրերի հետազոտական ու կրթական բաղադրիչների մասնաբաժինների ավելացում, մագիստրոսական թեզերի թեմաների շաղկապում Կենտրոնում և ԳԱԱ համակարգի ինստիտուտներում իրականացվող գիտական թեմաներին:
- Կենտրոնի գիտահետազոտական, տեխնիկական և լաբորատոր ներուժի ձեռքբերմանն ու ու զարգացմանն ուղղված աշխատանքների ընդլայնում:
- Միջազգային գիտահետազոտական գիտակրթական նախագծերում Կենտրոնի մասնակցության ընդլայնում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Հետազոտահեն կրթության կազմակերպման արդիական միջավայր:
- Վերանայված, արդիականացված ու բարելավված մագիստրոսական մասնագիտական ծրագրերի փաթեթներ:
- Ակադեմիական ազնվությունը երաշխավորող ներդրված արդիական մեխանիզմներ:

- Գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված մագիստրոսների և ասպիրանտների/դոկտորանտների թվաքանակի աճ:
- Մագիստրոսական և դոկտորական թեզերի հիմնական դրույթների ներկայացվածություն գիտաժողովներում ու տպագրված աշխատանքներ:
- Մագիստրոսական և դոկտորական համատեղ կրթական ծրագրեր:
- Կիրառվող խրախուսման առավել արդյունավետ ու ճկուն մեխանիզմներ բարձր գիտական վարկանիշ ունեցող հետազոտողների նկատմամբ և Սկոպուս (Scopus), կամ Վեբ օֆ Սայնս Քոր Քոլեքշն (Web of Science Core Collection, այսինքն՝ Science Citation Index Expanded, Social Sciences Citation Index, Arts & Humanities Citation Index, Emerging Sources Citation Index, Conference Proceedings Citation Index, Book Citation Index, այսուհետև՝ Վեբ օֆ Սայնս), կամ Ռաշն Սայնս Սայթեյշն Ինդեքս (Russian Science Citation Index) շտեմարաններում ընդգրկված պարբերականներում տպագրված գիտական հոդվածներ:
- Ընդլայնված և արդիականացված գիտահետազոտական, տեխնիկական և լաբորատոր ներուժի առկայություն:
- Գիտական գործունեության արդյունքների հաշվետվողականության ներդրված ընթացակարգ:

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Հետազոտահեն կրթության կազմակերպում	Ապահովված կամրջականություն գիտության և կրթության միջև, արդիականացված գիտահետազոտական միջավայր	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
2.	Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը բացառող գործիքակազմի արդիականացում	Ակադեմիական ազնվությունն ապահովող կիրարկվող վերանայված մեխանիզմներ	2024-2026թթ.	ԳԿՄԿ բյուջե
3.	Գիտահետազոտական համագործակցային կապերի ընդլայնում՝ հետազոտոտական աշխատանքներում	Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսումնառողներ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

	ուսումնառողների ներգրավմամբ			
4.	Գիտահրատարակչական գործունեության իրականացում	Ակադեմիական գիտական պարբերականի պորտալի կիրառություն, ուսանողների և դոկտորանտների թեզերի հիմնական դրույթները ներառող գիտական հոդվածների տպագրություն	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
5.	Կենտրոնի մագիստրոսական մասնագիտական ծրագրերում և թեզերում հետազոտական բաղադրիչի մասնաբաժնի և միջգիտակարգային հետազոտությունների ծավալի ընդլայնում	Կրկնապատկված հետազոտական բաղադրիչի առկայություն՝ Կենտրոնի մագիստրոսական մասնագիտական ծրագրերում և թեզեում	2024-2028 թթ.	ԳԿՄԿ բյուջե
6.	Գիտահետազոտական, տեխնիկական և լաբորատոր արդիական ենթակառուցվածքների ապահովում	Ձեռքբերված գիտահետազոտական, տեխնիկական և լաբորատոր արդիական ենթակառուցվածքների ապահովում	2024-2028 թթ.	ԳԿՄԿ բյուջե Դրամաշնորհային միջոցներ
7.	ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների և կենտրոնների հետ աշխատանքային հարաբերությունների հաստատում, զարգացում և շարունակական բարելավում	ԳԱԱ համակարգի հաստատությունների հետ նոր պայմանագրերի կնքում, նորացված և բարելավված ՄԿԾ-ներով կրթության կազմակերպում	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե Դրամաշնորհային միջոցներ

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսանողների, ասպիրանտների և աշխատակիցների համակողմանի ներգրավում միջազգայնացման գործընթացում:
- Հայազգի և օտարերկրյա պետությունների քաղաքացիների՝ ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, դոկտորանտների և պրոֆեսորադասախոսական համակազմերի ներգրավմամբ արտասահմանյան առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ համագործակցային կապերի ընդլայնում և շարունակական զարգացում:
- Միջազգային ճանաչման ու համբավի ընդլայնում՝ իր վարկանիշին և հեղինակությանը համահունչ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում:
- Միջազգային ծրագրերում ԳԿՄԿ-ի մասնակցության ընդլայնում, եվրոպական գիտակրթական տարածքին Կենտրոնի ինտեգրման ամբողջականացում, Կենտրոնի միջազգայնացում:
- Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում:
- Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում:
- Միջազգային ծրագրերի ֆինանսավորման ավելացում, միջազգային ու եվրոպական ֆինանսավորման ներգրավում դրամաշնորհների տեսքով:
- Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում:
- Օտար լեզուներով հաղորդակցության խորացման և միջազգային ուսումնական հաստատությունների ու գիտակրթական կենտրոնների ուսանողների հետ կապերի ու հետազոտական տիրույթում փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Կնքվող միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի թվի աճ:
- Միջազգային վերապատրաստումների թվի աճ:
- Ընթացիկ համատեղ հետազոտական ծրագրերի առկայություն:
- Փորձի փոխանակման համար արտասահման ուղարկվող և արտասահմանից ժամանող ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի թվի աճ:
- Մշակված փաստաթղթերի և ուսումնասիրությունների թվի աճ:
- Կազմակերպված իրադարձությունների թվի աճ:
- Օտար լեզուներով դասընթացներին մասնակցող ուսանողների թիվ:

- Օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվ:
- Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի իրականացում:

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ ;կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Միջազգայնացման քաղաքականությունից բխող փաստաթղթերի մշակում և/կամ ուսումնասիրությունների անցկացում	Մշակված կարգեր և/կամ անցկացված ուսումնասիրություններ	2024թ.	ԳԿՄԿ բյուջե
2.	Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում	Նոր կնքված և/կամ լրամշակված պայմանագրեր և համաձայնագրեր	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
3.	Օտարերկրյա և ներպետական ԲՈՒՀերի և շահեկիցների հետ կրկնակի/համատեղ մագիստրոսական ծրագրերի մշակում	Օտարերկրյա և ներպետական ԲՈՒՀերի և շահեկիցների հետ համատեղ և/կամ կրկնակի դիպլոմով իրականացվող մագիստրոսական ծրագրերի թիվ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
4.	Դրամաշնորհային նոր նախագծերի	Ներկայացված դիմում հայտերի թիվ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհայ

	մասնակցության և իրականացման համար դիմում հայտերի պատրաստում			ին միջոցներ
5.	Շարունակական մասնագիտական վերապատրաստումներ	Միջազգայնացմանն ուղղված վերապատրաստումների մասնակցություն Մասնագիտական վերապատրաստումների մասնակցություն Վերապատրաստումներ ի կազմակերպում և անցկացում	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհայ ին միջոցներ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսումնառողների նախաձեռնությունների խրախուսում և ներգրավում որոշումների կայացման գործընթացներին:
- Ուսանողների կազմակերպմանն ու ինքնակառավարման մարմինների գործունեությանն աջակցություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ուսանողների շրջանում մասնագիտական և հետազոտական միահյուսված գործունեությանը՝ միտված համապարփակ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների շարունակական արդիականացման, ամրապնդմանը, պրակտիկաների միջոցով գործնականում կիրարկման հնարավորությունների ընդլայնմանը:
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, երիտասարդ գիտնականների միավորման, ուսանողական գիտական ընկերության գործունեության ընդլայնում, կամավորական աշխատանքների խրախուսում, գիտությամբ հետաքրքրված լավագույն ուսանողներին ուսումնառությունը շարունակելու և խրախուսման մեխանիզմների ընդլայնում:
- ՀՀ ԳԱԱ ինստիտուտներում առկա գիտական թեմաներում, միջազգային դրամաշնորհային ու միջազգային փորձի փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ապահովում, տեղեկատվական շտեմարանի ստեղծում, մշտապես թարմացում:
- Ուսանողական կառույցների հետ գործակցության արդյունավետության բարձրացում, ուսանողության ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպում-քննարկումների կազմակերպում, նրանց ներգրավում Կենտրոնում որոշումների կայացման գործընթացներում:
- Սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ապահովում, Կենտրոնում հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողական կառույցների դերի բարձրացում, շրջանավարտների ներգրավում՝ որպես մենթորներ և/կամ որպես գործատուներ:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ուսանողական կառույցներում ընդգրկված սովորողների թվաքանակ:
- Ուսանողական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ընտրությունների պարբերականություն:
- Ուսանողների ներկայացուցիչներ – Կենտրոնի տնօրինություն-ստորաբաժանումներ հանդիպում-քննարկումների թվի և պարբերականության աճ:
- Կենտրոնի և տարբեր բուհերի, գիտական կազմակերպությունների գիտաժողովներին ուսանողների ներկայացրած զեկույցների, տպագրված գիտական հոդվածների թվի աճ:
- Ուսանողների ներգրավմամբ մշակված փաստաթղթերի թվի աճ :
- Կազմակերպված ուսանողական միջոցառումների, ծրագրերի թիվ, դրանց մասնակից ուսանողների թվի աճ:

- ԳԱԱ գիտական թեմաներում ընդգրկված ուսանողների թվի աճ ։
- Ուսանողների գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաները կազմակերպող կառույցների թվի աճ ։
- Որպես մենթորներ կամ գործատուներ ներգրավված Կենտրոնի շրջանավարտների թվի աճ։

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Ուսանողական կառույցների ղեկավար մարմինների ընտրությունների կազմակերպում, նախաձեռնությունների խրախուսում	Արդյունավետորեն գործող ուսանողական ինքնակառավարման մարմիններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
2.	Ուսանողական գիտական, կրթական, մշակութային և այլ տիպի ծրագրերի մշակում և իրականացում	Ուսանողական ծրագրեր	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
3.	Ուսանողության ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպում-քննարկումներ	Ուսանողների ներգրավում Կենտրոնում տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացներում	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
4.	Ուսանողների՝ ՄԿԾ-ների և Կենտրոնի գործունեության բարելավման աշխատանքներում ներգրավման ապահովում	ՄԿԾ-ների բարելավման խմբերում ուսանողների մասնակցության	պարբերաբար	ԳԿՄԿ բյուջե
5.	Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների	Շրջանավարտների մասնակցություն ԳԿՄԿ որակի	պարբերաբար	ԳԿՄԿ բյուջե

	կազմակերպում և համակարգում	ապահովման աշխատանքներին		

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Որակի ապահովման շրջափուլի ներդրմամբ և որակի մշակույթի տարածմամբ՝ ԳԿՄԿ գործունեության կազմակերպում:
- Որակավորումների արժանահավատ շնորհման դիտանկյունից ՄԿԾ-ների բազմագործուն մշտադիտարկում և գնահատում (ԳԿՄԿ համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ):
- Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կազմակերպում և ղեկավարում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Պարբերական և ըստ անհրաժեշտության գնահատումներ:
- Շահակիցների կարծիքի ուսումնասիրություն;
- Որակական և քանակական հետազոտությունների անցկացում:
- Միջազգային փորձի ուսումնասիրում;
- Կոռուպցիոն վտանգների բացահայտում, դրանց հաղթահարման միջոցառումների իրականացում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Հաշվետվությունների թիվ
- Զեկույցների թիվ
- Վերլուծությունների թիվ
- Հրապարակումների թիվ

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Որակի ներքին ապահովման գործընթացների քաղաքականության, թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում	Փաստաթղթերի հրապարակման թիվ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
2.	Կրթական ծրագրերի շարունակական բարելավման նպատակով	Լրամշակված կրթական ծրագրեր	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

	ուսանողների կրթական կարիքների և աշխատաշուկայի պահանջարկի պարբերական գնահատման իրականացում			
3.	Բարելավման միջոցառումների իրականացում՝ հիմնված շահակիցների կարծիքի ուսումնասիրության, գնահատման արդյունքների վրա	Կիսամյակային վերլուծությունների արդյունքներ բոլոր ամբիոնների մասով տարեկան վերլուծություններ՝ կրթական ծրագրերի մասով	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
4.	ԳԿՄԿ բարելավման պլանով նախատեսված գործողությունների մշտադիտարկում	Միջնաժամկետ հաշվետվություններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
5.	Նախապատրաստում ԳԿՄԿ-ին արտաքին գնահատման համար	Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
6.	Կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում և արդիականացում՝ ըստ անհրաժեշտության, արդյունքների, վերլուծությունների հրապարակում, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում և ամբողջականացում:	Նոր գործիքների առկայություն, հաշվետվություններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
7.	Կոռուպցիոն վտանգների բացահայտում, օբյեկտիվ գնահատում և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանը ուղղված միջոցների	Կիսամյակային հաշվետվություններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

	ձեռնարկում			
8.	Նպատակների, խնդիրների հետ իրատեսական ու չափելի, տեսանելիորեն կապակցված ԳԱՑ-երի համակարգ	Որակի բաժնի գնահատման զեկույց նախագծի վերաբերյալ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
9.	Համակարգի մշտադիտարկում, ընթացիկ խնդիրների դուրսբերում և բարելավման առաջարկություններ	Տարեկան հաշվետվություններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
10.	ՄԿԾ-ների ինքնավերլուծությունների մշտադիտարկում /SWOT վերլուծություններ /տարեկան առնվազն 2 ՄԿԾ	Հաշվետվություն, Ինքնավերլուծության զեկույցների դիտարկում	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
11.	Կենտրոնի տարբեր բաժինների պահանջների գոհունակության գնահատում	Գնահատման վերլուծություններ	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
12.	Կարիերայի աջակցման մեխանիզմներից շրջանավարտների գոհունակություն (որակական գնահատում)	ՈԱ ֆոկուս –խմբի արձանագրությու ն	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե
13.	Ներդրված մեխանիզմներից Կենտրոնի ՊԴ կազմի գոհունակություն (որակական գնահատում)	ՈԱ ֆոկուս –խմբի արձանագրություն	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

- Տեղեկատվական տեխնոլոգիաների, ուսումնատեխնիկական միջոցների տեղեկատվական-կրթական և վեբ տեխնոլոգիաների կիրառում, զարգացում և սպասարկում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում կրթական և հետազոտական գործընթացներում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ժամանակակից տեխնիկական միջոցներով լսարանների, դահլիճների վերազինում և արդիականացում:
- Կենտրոնում գործող հեռավար ուսուցման էլեկտրոնային համակարգի զարգացում և կատարելագործում, առցանց եղանակով իրականացվող դասընթացների կանոնակարգում և ընդլայնում:
- Հեռավար կրթության համար ուսումնատեղեկատվական նյութերի ստեղծում, թվայնացման կազմակերպում:
- ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի (ՀԳԳ) էլեկտրոնային պաշարների հասանելիություն Կենտրոնի ցանցից:
- Կենտրոնի ներքին և ուսումնական գործընթացների կառավարման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում և զարգացում:
- Էլեկտրոնային գիտական հանդեսներին բաժանորդագրության ապահովում:
- Կենտրոնի էլեկտրոնային ռեսուրսներից և համակարգերից օգտվելու համար մեթոդական ձեռնարկների, տեղեկատվական նյութերի, ուղեցույցների ստեղծում և մշակում:
- Համակարգիչների և համակարգչային սարքավորումների, սերվերների արդիականացում, սպասարկում:
- Տեղային ցանցի և համացանցի զարգացում և ընդլայնում (լարային, անլար):
- Ձեռքբերման նպատակով համակարգչային սարքերի տեխնիկական բնութագրերի կազմում:
- Խորհրդատվություն և աջակցություն դասախոսներին և ուսանողներին:
- Խորհրդատվություն և աջակցություն աշխատակազմին:
- Կենտրոնի պաշտոնական կայքում տեղեկատվության արտացոլում, թարմացում, կատարելագործում:
- Կենտրոնի աշխատակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի համար տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերվող դասընթացների, վերապատրաստումների կազմակերպում և անցկացում:
- Կենտրոնում SS ծառայությունների զարգացում և ընդլայնում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Ժամանակակից տեխնիկական միջոցներով կահավորված լսարաններ, դահլիճներ:
- Թարմացված հեռավար հարթակ՝ թարմացված մոդուլներ, նոր ինտեգրված մոդուլներ, կանոնակարգված դասընթացներ:
- ՀԳԳ պաշարներից օգտվելու հնարավորություն:

- Դյուրին կերպով կազմակերպված էլեկտրոնային փաստաթղթաշարժ:
- Կենտրոնի էլեկտրոնային ռեսուրսներից և համակարգերից հեշտացված , արագ օգտվելու հնարավորություն:
- Ըստ անհրաժեշտ քանակի՝ համակարգչային տեխնիկայի, հարակից միջոցների առկայություն:
- Սերվերների կիրառման և օգտագործման հասանելիություն աշխատանքային գործընթացում:
- Տեղային ցանցի և համացանցի անխափան կապի առկայություն:
- Համակարգչային սարքերի գնումների համար ներկայացված տեխնիկական բնութագրեր ու գնված սարքեր:
- Կենտրոնի պաշտոնական կայքում տրամադրված տեղեկատվության առկայություն:
- Պաշտոնական կայքում ամենամյա վերապատրաստումների կազմակերպման մասին տեղեկատվության, հաշվետվությունների առկայություն:

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռք բերման բնութագրի և հայտի ներկայացում, ձեռք բերված միջոցների կարգաբերումներ	Ձեռք բերված միջոցներով կահավորված լսարաններ, դահլիճներ	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
2.	Հեռավար հարթակի և մոդուլների թարմացումներ, ավելացումներ	Ծրագրապես ժամանակակից հարթակի միջոցով գործառութային ընդլայնված հնարավորություններով հեռավար ուսուցման կազմակերպում	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
3.	Էլեկտրոնային կառավարման համակարգերի գործառույթների թարմացումներ ըստ անհրաժեշտության	Փաստաթղթաշարժի արդյունավետ կազմակերպում	2024-25թթ.,	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
4.	Կենտրոնի էլեկտրոնային ռեսուրսներից և համակարգերից օգտվելու ուղեցույցների մշակում	Պարզեցված ձևով Կենտրոնի ռեսուրսներից և համակարգերից օգտվելու հնարավորություն	2024-28թթ.,	ԳԿՄԿ բյուջե

5.	Սեմինարներ (վեբինարներ) կապված տեղեկատվական գրագիտության հետ	Տեղեկատվական միջավայրում գրագետ աշխատելու կարողությունների զարգացում	2024-28թթ.,	ԳԿՄԿ բյուջե
6.	Դասախոսական կազմի վերապատրաստում	Համակարգչային միջոցներով աշխատելու կարողությունների զարգացում	2024-28թթ.,	ԳԿՄԿ բյուջե
7.	Աշխատակազմի վերապատրաստում	Համակարգչային միջոցներով աշխատելու կարողությունների զարգացում	2024-2028 թթ.	ԳԿՄԿ բյուջե
8.	Համակարգչային համալրող սարքերի և միջոցների տեխնիկական բնութագրի կազմում, ձեռք բերում, շահագործման հանձնում	Աշխատանքային արդյունավետության բարձրացում	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե, դրամաշնորհային միջոցներ
9.	Ուսումնաաշխատանքային գործունեությունն ապահովող կայանների շահագործում և համակարգչային միջոցների սպասարկում	Աշխատանքային արդյունավետության բարձրացում	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե
10.	Կենտրոնի լսարանային ֆոնդում գտնվող համակարգչային տեխնիկայի և հարակից միջոցների սպասարկում	Ժամանակակից ուսումնական գործընթացի ապահովում	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե
11.	Կենտրոնի պաշտոնական կայքի թարմացումներ և նյութերի տեղադրումներ, ֆունկցիոնալ նոր հնարավորություններ	Տրամադրված նյութերի ու տեղեկատվության արդյունավետ հասանելիություն ԳԿՄԿ պաշտոնական կայքից	2024-28թթ.	ԳԿՄԿ բյուջե

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ԳԿՄԿ-ի՝ որպես բացառիկ գիտահետազոտական բարձրագույն ուսումնական հաստատության առաքելության և հետազոտահեն կրթական գործունեության համար նպաստավոր հաղորդակցական միջավայրի ստեղծում:
- ԳԿՄԿ դրական իմիջի և հեղինակության ձևավորում, ամրապնդում և ներկայացում հասարակության տարբեր խմբերին:
- ԳԿՄԿ տարբեր ստորաբաժանումների ծրագրերի, միջոցառումների, նախագծերի PR-սատարում:
- ԳԿՄԿ-ի և հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ապահովում, երկկողմանի հաղորդակցության ձևավորում:
- Աջակցություն գիտական գործունեության ոլորտում և կրթական ծառայությունների շուկայում ԳԿՄԿ մրցունակության ապահովման գործընթացում:
- ԳԿՄԿ-ի գործունեության ուղղությունների, նպատակների և ծառայությունների վերաբերյալ հանրային իրազեկում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ԳԿՄԿ գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովում:
- Հասարակության լայն շրջանակների համար ԳԿՄԿ առաքելության, նպատակների, գործունեության ու ծրագրերի վերաբերյալ մշտապես արդիականացվող տեղեկատվության մատուցում:
- Թիրախային լսարաններին հասցեագրված նպատակային հաղորդագրությունների փոխանցում:
- ԳԿՄԿ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար կիրառվող գործիքների բազմազանեցում, տեղեկատվական հարթակների ստեղծում և գործածում:
- Արդյունավետ մեդիահարաբերությունների ձևավորում՝ ավանդական և առցանց ԶԼՄ-ներում ԳԿՄԿ առաքելության, նպատակների, գործունեության արդյունքների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման, ինչպես նաև ներքին և արտաքին (ազգային և միջազգային) լսարանների հետ մշտական երկխոսության իրականացման միջոցով:
- ԳԿՄԿ ճանաչելիության (լոգոտիպ, շենք, ներկայացուցչական անձինք) ապահովում տարբեր լսարանների շրջանում:
- ԳԿՄԿ-ի դրական իմիջի և հեղինակության ձևավորմանն ուղղված հանրային միջոցառումների (գիտակրթական ծրագրեր, բարեգործական ակցիաներ և այլն) իրականացում:
- ԳԿՄԿ ստորաբաժանումների կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովման մակարդակի բարձրացում:
- ԳԿՄԿ ստորաբաժանումների և արտաքին թիրախային լսարանների հետ կապի ապահովում և համակարգում:
- Առանձին թիրախային լսարանների հետ հաղորդակցման ռազմավարական քայլերի մշակում:
- Իրականացվող PR և մարքեթինգային արշավների արդյունավետության գնահատում:

- ԳԿՄԿ-ի կողմից իրականացվող գիտական նախագծերի, հրատարակվող գիտական աշխատանքների, մատուցվող փորձագիտական ծառայությունների վերաբերյալ հասարակայնության և հատկապես պոտենցիալ գործընկերների շրջանում հետաքրքրվածության ձևավորում:
- ԳԿՄԿ մագիստրատուրա ընդունվող դիմորդների/ուսանողների թվի ավելացում, թիրախային խմբերի ու կազմակերպությունների հետ մշտական կայուն համագործակցության ապահովում:
- ԳԿՄԿ շրջանավարտների միջև մշտական կապի հաստատում ու ամրապնդում ԳԿՄԿ՝ գիտական և կրթական ոլորտի գործունեության մեջ շրջանավարտների ներգրավմամբ, հանրային կյանքի տարբեր ոլորտներում զգալի նվաճումներ ձեռք բերած ուսանողների հետ մշտական կապի ապահովում:
- ԳԿՄԿ ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև արդյունավետ կապի հաստատում, զբաղվածության ապահովում:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Կնքված նոր հուշագրեր, համաձայնագրեր և պայմանագրեր:
- Ձեռնարկությունների հետ համատեղ իրականացվող նախագծերում ներգրավված ուսանողների թիվ:
- Ուսանողների/շրջանավարտների հետ հարցազրույցների, հաջողության պատմությունների, կայքում և սոց.ցանցերում լուսաբանված նյութերի թիվ:
- Իրականացված ծրագրերի և միջոցառումների մասին կայքում և սոց.ցանցերում լուսաբանված նյութերի թիվ:
- Ներքուհական և արտաքուհական տարբեր միջոցառումներում ԳԿՄԿ ուսանողների մասնակցության աճ:
- Միջոցառումների անցկացման և կազմակերպման վերաբերյալ հաշվետվությունների առկայություն:
- Թիրախային լսարանների և շահառուների տեղեկատվական բազայի առկայություն:
- ԳԿՄԿ շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի կարիքների մոնիթորինգի արդյունքներ, շրջանավարտների թարմացված բազայի առկայություն:
- ԳԿՄԿ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների, ինչպես նաև այլ բնույթի ծառայությունների (գիտահետազոտական, հրատարակչական և այլն) վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում:
- Ֆոկուս-խմբային քննարկումների թիվ:
- Մեդիալաբորատորիայում նկարահանված տեսանյութերի թիվ:

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Հասարակության լայն շրջանակների համար ԳԿՄԿ առաքելության,	Իրականացված միջոցառումների լուսաբանում ԳԿՄԿ	2024-2028	ԳԿՄԿ բյուջե

	նպատակների, գործունեության ու ծրագրերի վերաբերյալ մշտապես արդիականացվող տեղեկատվության մատուցում	կայքում և տեղեկատվության տարածում Ուսանողների հաջողության պատմությունների լուսաբանում կայքում		
2.	ՊԴ/վարչական անձնակազմի մասնակցության ապահովում գիտահանրամատչելի հեռուստառադիո հաղորդումներին, ԶԼՄ-ներում գիտությունը լուսաբանող հոդվածների հրապարակում	Տեղեկատվության տարածում հասարակության լայն շերտերին	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
3.	Գիտահանրամատչելի դասախոսությունների կազմակերպում ՀՀ տարբեր բուհերի ուսանողների համար:	ԳԿՄԿ գործունեության վերաբերյալ տեղեկատվության ապահովում թիրախային լսարանին	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
4.	Գիտական արդյունքները հանրայնացնող պարբերական միջոցառումների կազմակերպում	Գիտական արդյունքների վերաբերյալ իրազեկվածություն	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
5.	ԳԿՄԿ-ի դրական իմիջի և հեղինակության ձևավորմանն ուղղված հանրային միջոցառումների (գիտակրթական ծրագրեր, բարեգործական ակցիաներ և այլն) իրականացում	Լուսաբանում և տեղեկատվության տարածում; դիմորդների թվի ավելացում	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
6.	Սոց. տարբեր հարթակներում զովազդային արշավների կազմակերպում	Տեղեկատվության տարածում թիրախային լսարանին	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
7.	Գործատուների հետ ուսանողների հանդիպումների, համաժողովների, վարպետաց դասերի, սեմինարների, քննարկումների կազմակերպում Գործատուների կարծիքի ուսումնասիրում,	Նոր հուշագրերի/ պայմանագրերի կնքում	2024-2028	ԳԿՄԿ բյուջե Ներգրավված միջոցներ

	գործատուների ներգրավվածության բարձրացում ՄԿԾ-ների մշակման գործում			
8.	ԳԿՄԿ ուսանողների և շրջանավարտների զբաղվածության և աշխատանքի ընդունման հարցերի կազմակերպում և համակարգում	Նոր հուշագրերի/ պայմանագրերի կնքում Աշխատող ուսանողների/ շրջանավարտների թվի ավելացում	2024-2028	ԳԿՄԿ բյուջե Ներգրավված միջոցներ
9.	ԳԿՄԿ կայքի և սոցցանցերի էջերի լավարկում և գրավչության բարձրացում	Թիրախային լսարանի ներգրավում	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
10.	Թիրախային լսարանների հետ հաղորդակցման կազմակերպում, Կենտրոնի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, PR և մարքեթինգային արշավների արդյունավետության գնահատում	Ուսումնասիրության արդյունքներ	2024-2028	ԳԿՄԿ բյուջե
11.	Հարցազրույցների կազմակերպում և նկարահանում ուսանողների և ՊԴ կազմի հետ մեդիալաբորատորիայի գործունեության շրջանակներում	Թիրախային լսարանի ներգրավում	2024-2028	ԳԿՄԿ բյուջե

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում և կառավարում:
- Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակում և իրականացում:
- Որակյալ դասախոսական կազմի, գիտական և վարչական աշխատակազմի կայունության ապահովում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

- Կենտրոնի կառավարման ճկունության և կանխատեսելիության ապահովում՝ հիմքում ունենալով ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության, որոշումների կայացման գործընթացում մասնակցության սկզբունքները:
- Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների և պատասխանատվության իրական և ռացիոնալ բաշխում, աղյունավետ գործունեության ապահովում:
- Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական անձնակազմի կայունության պահպանում, խրախուսման և պարգևատրման համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում:
- Թիմային աշխատանքի խրախուսում՝ աշխատակազմի համար միջոցառումների կազմակերպում, պարբերական վերապատրաստումների, դասընթացների ու սեմինար-քննարկումների կազմակերպում :
- Երիտասարդ կադրերի ներգրավում Կենտրոն:
- Առկա գիտակրթական և վարչական անձնակազմի վերապատրաստում:
- Անձնակազմի խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում:
- Մարդկային ռեսուրսների կառավարմանը վերաբերող նոր կանոնակարգերի մշակում:
- Պաշտոնների անձնագրերի հստակեցում, պարտականությունների վերանայում և վերաբաշխում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ

- Անձնակազմի երիտասարդացում /Կենտրոնի երիտասարդ կադրերի թվի աճ/
- Որակավորված մասնագետների թվի աճ
- Խրախուսման նոր համակարգերի ներդրում
- Նոր կանոնակարգեր
- Նոր կամ վերամշակված պաշտոնի անձնագրեր

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Կենտրոնի կառավարման ճկունության և կանխատեսելիության ապահովում՝ հիմքում ունենալով ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության, որոշումների կայացման գործընթացում մասնակցության սկզբունքները	Կոլեգիալ որոշումների կայացման ապահովում	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե
2.	Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների և պատասխանատվության իրական և ռացիոնալ բաշխում, աղյունավետ գործունեության ապահովում	Գործընկերային հարաբերությունների զարգացում, կանոնակարգված թիմային աշխատանքի ապահովում	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե
3.	Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության իրականացում, որակյալ դասախոսական կազմի և վարչական անձնակազմի կայունության պահպանում, խրախուսման և պարգևատրման	Կայուն և արդյունավետ աշխատանքային հարաբերությունների ապահովում, բարձրորակ մասնագետների առկայություն	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե

	համակարգերի կիրառում, աշխատանքային հարաբերությունների իրավական հստակ կարգավորում			
4.	Թիմային աշխատանքի խրախուսում՝ աշխատակազմի համար միջոցառումների կազմակերպում, պարբերական վերապատրաստումների, դասընթացների ու սեմինար-քննարկումների կազմակերպում	Թիմային և համագործակցային աշխատանքային միջավայրի զարգացում	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե
5.	Երիտասարդ կադրերի ներգրավում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն	ԳԿՄԿ-ի համակարգում գիտական նոր խմբերի ձևավորում և անձնակազմի երիտասարդացում	2024-2028թթ	ՀՀ պետական բյուջե, ԳԿՄԿ բյուջե
6.	Առկա գիտակրթական և վարչական անձնակազմի վերապատրաստում	Որակավորված մասնագետների առկայություն և ավելացում	2024-2028թթ	ՀՀ պետական բյուջե, ԳԿՄԿ բյուջե
7.	Անձնակազմի խրախուսման նոր մեխանիզմների /նյութական և ոչ նյութական/ մշակում և ներդրում	Աշխատանքային գործունեության գրավչության բարձրացում, պարգևների հուշամեդալների պատվոգրերի, ինստիտուտի ներդրում	2024-2028թթ	ՀՀ պետական բյուջե, ԳԿՄԿ բյուջե
8.	Մարդկային ռեսուրսների կառավարմանը վերաբերող նոր կանոնակարգերի մշակում	Աշխատողի անհատական պատասխանատվության բարձրացում	2024-2028թթ	ԳԿՄԿ բյուջե

9.	Պաշտոնների անձնագրերի հստակեցում, պարտականությունների վերանայում և վերաբաշխում	Կանոնակարգված և հստակ աշխատանքային հարաբերություններ	2024-2028թթ.	ԳԿՄԿ բյուջե

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԳԿՄԿ ֆինանսատնտեսական գործունեության հիմնական նպատակն է՝ ֆինանսական հոսքերի արդյունավետ պլանավորումը և բաշխումը՝ Կենտրոնին վերապահված գործառույթների ամբողջական ու պատշաճ իրականացման, ֆինանսական և տնտեսական կայունության, ինչպես նաև Կենտրոնի գործունեության ռազմավարական նպատակների իրագործման միջոցառումների ապահովմանը համապատասխան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այլընտրանքային ֆինանսավորման հոսքերի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում/կրթական, խորհրդատվական ծառայությունների մատուցում, դրամաշնորհային ծրարգրերի մասնակցություն/:
- Նոր կրթական ծառայությունների մշակում և իրականացում /հետազոտություն,փորձաքննություն,ուսումնասիրություն,շարունակական կրթություն, վերապատրաստում, պրակտիկաների կազմակերպում/:
- Կենտրոնի ֆինանսական կայունության ապահովում՝ եկամուտների և ծախսերի օպտիմալացում:
- Կենտրոնի աշխատակազմի և պրոֆեսորա-դասախոսական կազմի աշխատավարձի շարունակական բարձրացում՝ մրցակցային վարձատրության և արդյունքի վրա հիմնված պարգևատրման համակարգի ներդրման միջոցով:
- ԳԿՄԿ ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման մեխանիզմի ձևավորում՝ միտված Կենտրոնի գործունեության ռազմավարական և մարտավարական նպատակների իրագործմանը:

ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Կենտրոնի ֆինանսական մուտքերի ծավալ
- Կենտրոնի ֆինանսական ծախսերի ծավալ
- Բյուջեի պակասուրդի ծավալ
- Ներդրված նոր այլընտրանքային ֆինանսական հոսքեր ապահովող ծառայությունների թվաքանակ
- Դրամաշնորհային ծրագրերով ֆինանսավորման ծավալ

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր կամ կանխատեսվող չափ
1	2	3	4	5
1.	Այլընտրանքային ֆինանսավորման հոսքերի ապահովմանն ուղղված	Ուսումնասիրություններ, քննարկումներ, դրամաշնորհներին	2024-2028	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ

	միջոցառումների իրականացում/կրթական, խորհրդատվական ծառայությունների մատուցում, դրամաշնորհային ծրագրերի իրականացում /	մասնակցություն		
2.	Նոր կրթական ծառայությունների մշակում և իրականացում/հետազոտություն, փորձաքննություն, ուսումնասիրություն, շարունակական կրթություն, վերապատրաստում, պրակտիկաների կազմակերպում/	Նոր կրթական ծառայություններ, այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ	2024-2026	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
3.	Կենտրոնի ֆինանսական կայունության ապահովում՝ եկամուտների և ծախսերի օպտիմալացում	Հավասարակշռված ֆինանսական հոսքեր	2024-2028	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
4.	Կենտրոնի աշխատակազմի աշխատավարձի շարունակական բարձրացում՝ մրցակցային վարձատրության և արդյունքի վրա հիմնված պարգևատրման համակարգի ներդրման միջոցով,	Մրցունակ աշխատավարձ	2024-2026	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ
5,	ԳԿՄԿ ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման մեխանիզմի ձևավորում՝ միտված Կենտրոնի գործունեության ռազմավարական և մարտավարական նպատակների իրագործմանը	Մշակված կարգեր/կատարված ուսումնասիրություններ/	2024-2026	ԳԿՄԿ բյուջե դրամաշնորհային միջոցներ

ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ			
Հ/Հ	Ռիսկի նկարագրություն	Ռիսկի մակարդակ	Ռիսկի մեղմացում
1.	Կրթության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության բարձրացմանն ուղղված անբավարար ջանքեր	Բարձր	Գործատուների կարիքներին համապատասխան՝ աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրերի ներդրում (2025-2026 ուստարի)
2.	Երիտասարդ մասնագետների շարունակվող արտահոսք	Բարձր	Հնարավորինս ապահովել երիտասարդ մասնագետների կադրային աճը (դրամաշնորհային միջոցների ներգրավում)
3.	Գիտության որոշ ուղղությունների գրավչության ցածր մակարդակ	Միջին	Երիտասարդ կադրերի կարողությունների զարգացում և օգտագործում նաև այլ բնագավառներում
4.	Հասարակության ընկալման մեջ գիտության վարկանիշի ցածր մակարդակ	Բարձր	Հասարակության լայն շրջանակների համար կրթության և գիտության արժեվորմանն ուղղված միջոցառումներ
5.	Օրենսդրական դաշտի հնարավոր խոչընդոտներ	Միջին	Օրենսդրական նախագծերի քննարկումներին ակտիվ մասնակցություն
6.	Արտաքին իրադարձությունների չկարգավորված ազդեցություն	Բարձր	Արտաքին գործոններով պայմանավորված միջոցառումների (գործընթացների) վերանայում՝ փոփոխությունների հնարավորությամբ
7.	Հանրության շրջանում կրթության և հետազոտության նկատմամբ թույլ մոտիվացիա	Միջին	Գիտակրթական և գիտահետազոտական գործունեության հանրայնացում

8.	Աճող ծախսեր	Բարձր	Միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացում
9.	Ուսանողների թվաքանակի նվազում	Միջին	Լուսաբանող աշխատանքների կազմակերպում
10.	Աշխատակազմի սակավություն	Բարձր	Արտաբյուջետային միջոցների հատկացում
11.	Ամբիոնների անհամաչափ միջազգայնացում	Բարձր	Լավագույն փորձի փոխանցում
12.	Օտարերկրյա դասախոսների բացակայություն	Բարձր	Առցանց դասավանդման հնարավորության տրամադրում
13.	Ժամանակակից ծրագրային պահանջներին բավարարող համակարգչային բազայի կամ հենքի անհրաժեշտություն	Միջին	Նոր տեխնիկական միջոցների ձեռք բերում
14.	Ուսանողների անբավարար մասնակցություն միջոցառումներին	Բարձր	Սերտ համագործակցություն ամբիոնների վարիչների հետ: Ուսանողների մասնակցության խթանման մեխանիզմների ստեղծում:
15.	Բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետների սակավություն	Բարձր	Աշխատավարձերի վերանայում
16.	Ֆինանսական մուտքերի անկայունություն	Բարձր	Դրամաշնորհային միջոցների աճ, այլընտրանքային ծառայությունների մատուցում
17.	Անարդյունավետ ծախսերի առկայություն	Միջին	Արդյունքի վրա հիմնված ֆինանսավորում
18.	Այլընտրանքային հստակ ծառայությունների պահանջարկի բացակայություն	Բարձր	Շուկայի ուսումնասիրություն, թիրախային խմբերի հետ հանդիպում
19.	Ֆինանսական մուտքերի և ելքերի անհամապատասխանություն	Բարձր	Ծախսերի օպտիմալացում, եկամուտների այլընտրանքային աղբյուրների ներդրում

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿԱԶՄ՝

Արմեն Սարգսյան
Նաիրա Հակոբյան
Երջանիկ Զարգարյան
Նարինե Վարդանյան
Ատոմ Մխիթարյան
Արուսյակ Հարությունյան
Լիլիթ Ադամյան
Արմեն Եղոյան
Լիլիթ Գրիգորյան
Կարեն Սարգսյան